«Ես այդ մի կտոր չոր հացը ոչ թե ուտում էի, այլ փոքր կտորներով ծծում, որ երկար վայելեմ համը…»

Վավերագրել եմ իմ համաքաղաքացու, «Վանաձորի պատվավոր քաղաքացու», դրամատուրգ, արձակագիր, երգիծաբան, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սամվել Խալաթյանի[1] *մանկության պատմությունն աքսորավայրից՝ ամենաանկեղծ, բայց ցավոտ հիշողություններով, որոնք բոլորը հետագայում նյութ են դարձել նրա պատվածքների համար, տեղ են գտել նրա պիեսներում: Մարդկայնորեն հուզիչ ու արժեքավոր այս զրույցն ամբողջական պահպանելու և պատմությանը փոխանցելու համար ներկայացնում եմ այն որպես հուշապատում:*

«Իմ հայրական կողմը մշեցիներ են, գաղթել են Մշից: Դեգերելով հասել են Սպիտակի շրջանի Ավդիբեկ գյուղը, որն այժմ կոչվում է Ծաղկաբեր: Մերոնք իրենց հետ բերել են Մշից ընտանեկան սուրբ համարվող Թուխ Մանուկին, որը մերոնք անվանում են Հլոյանց Սուրբ՝ Հղլաթ նախապապի անունով: Ռուսական մարդահանմարների ժամանակ քանի որ ռուսները բոլորի ազգանունները **«ով»** վերջածանցով էին էին գրում, Հղլաթյան չէին կարող գրել, գրում են Խալաթով, որը հետո դարձել է Խալաթյան: Կարծիք կա, որ մենք Խնուսից ենք գաղթել, կարծիք կա՝ թե Խլաթից, բայց Խլաթը ինձ հավաստի չի թվում. սա իմ հորական կողմն է:

Մորական կողմս էլ է գաղթական: Գաղթել են Պարսկաստանից, մորական պապս եղել է խոյեցի, տատս՝ սալմաստեցի: Տատիս կողմը եկել բնավորվել են Զանգիբասարի շրջանի Ախամզալու գյուղում: Զանգիբասարն այսօր Մասիս քաղաքն է, Ախամզալուն էլ դարձել է Մարմարաշեն: Զաքարի տղա Ալեքսանը՝ իմ պապը, Նախիջևանում է եղել, որից հետո քանի որ որբ է մնացել, քրոջը՝ Հայկանուշին վերցրած՝ զինվորագրվել է հայկական բանակին: 18 տարեկանում մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին: Ճակատամարտի ոչ բարենպաստ ելքից հետո երբ որ սկսել են հետ քաշվել, այսօրվա Տավրոս թաղամասի՝ նախկին Ժդանով կամ Ղշլաղ գյուղի հին կամրջի մոտ թոհուբոհի մեջ կորցրել է քրոջը՝ Հայկուշին: Այդ Հայկուշին ես շատ փնտրեցի՝ մտածելով՝ տեղի ժողովուրդը նրան որդեգրած կլինի, բայց այդպես էլ այդ թվականներին ծնված նման կնոջ չհայտնաբերեցի արխիվներում. երևի կամ թուրքերն են տարել, կամ սովից մահացել է: Պապս՝ Զաքարի տղա Ալեքսանն այնուհետև գնացել է Ախամզալու՝ այսօրվա Մարմարաշեն գյուղ, բատրակ է վարձվել իմ մորական տատի տանը: Նրանք տղամարդ չեն ունեցել, երկու քույր են եղել, մեծ քույրը և իմ տատ Գյուլիզան: Եվ ահա պապս սիրահարվել է նրա աղջկան: Տատս մորական կողմից ազնվական է եղել, ավարտել է նաև օրիորդաց գիմնազիան: Հրաշալի գիտեր հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուները:

***

Հայրս Հայրենական մեծ պատերազմում վիրավորվում է (նա երեք անգամ է վիրավորվել, վերջին վիրավորման մասին է խոսքը), բուժումը շարունակում է Զանգիբասարի՝ այսօրվա Մասիսի զինվորական հոսպիտալում: Մայրս, որ պատերազմ գնալուց խուսափելու համար

---

1 (https://avproduction.am/?ln=am&page=person&id=2023&name=%D5%8D%D5%A1%D5%B4%D5%BE%D5%A5%D5%AC_%D4%BD%D5%A1%D5%AC%D5%A1%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6)

թողել էր բժշկական ինստիտուտը երկրորդ կուրսից՝ վախենալով, որ իրեն կտանեն բանակ, իր ընկերուհու հետ խնամելիս է լինում վիրավոր զինվորականներին: Հայրս սիրահարվում է նրան, պատերազմի ավարտից հետո երբ զորացրվում է, ամուսնանում են: Մորս բերում է գյուղ, այնուհետև՝ Կիրովական:

Իմ ծննդից առաջ փոքր մորաքույրս՝ Սվետլանան, գալիս է մեր տուն հյուր՝ իր ավագ քրոջը՝ մորս օգնելու: Այդ ժամանակ՝ 1949 թվականի հունիսի 14-ին, մորական պապիս աքսորում են: Աքսորում են նրան, Գյուլիսարին, երեք մորաքույրներիս, երկու քեռիներիս: Իսկ Սվետլանան այդ օրերին մեր տանն էր: Հայրս, վախենալով, որ այդ 8 տարեկան երեխային էլ որպես ազգի թշնամու կաքսորեն, իր ծանոթների միջոցով կարողանում է փաստաթուղթ հանել՝ իբրև թե Սվետլանան իր աղջին է: Մինչև իր կյանքի վերջն էլ, իսկ նա շատ կարճ ապրեց՝ 25 տարի, գրվում էր՝ Խալաթյան Սվետլանա Մհերի (որպես իմ մեծ քույր):

Այդ գործը հայտնի է դառնում համապատասխան մարմիններին, հորս կանչում են և ասում՝ դու հայրենիքի թշնամու երեխայի ես պատսպարել, կեղծիք ես արել: Բայց «մարդկայնություն» են ցուցաբերում, և մեր ընտանիքը հայտնվում է Սիբիրում՝ այն նույն գյուղում, որտեղ ապրում էին իմ մորական տատն ու պապը: Դա Բառնաուլից մոտ 200 կմ հեռավորության վրա գտնվող Տյագուն գյուղն էր, որը հիմնել էին հայերը: Իմիջայլոց, բանաստեղծ, հետագայում մշակույթի նախարար Հովիկ Հովեյանը, որ ռադիոյում էր աշխատում, այդ գյուղի մասին շատ հետաքրքիր տեսաֆիլմ էր պատրաստել, որտեղ ես շատ հարազատ բաներ գտա:

Ահա այնտեղ էլ 1950 թվականի հունվարի 9-ին ծնվում եմ ես: Առաջ ընկնելով ասեմ, որ երբ աքսորավայրից վերադարձանք, հայրս, վախենալով, որ իմ կենսագրության մեջ այդ շրջանը կարող է բացասական դեր խաղալ, դարձյալ իր ծանոթների միջոցով մի փաստաթուղթ է հանում, որ իբրև ես ծնվել եմ Կիրովականում՝ Քյարփիշխան կոչվող թաղամասում, որն այն ժամանակ արդեն չկար, ստուգել էլ չէր լինի այդ փաստաթուղթը: Այդպես ես դարձա կիրովականցի: Ասեմ նաև, որ ես բռնագաղթվածի փաստաթուղթ էլ չունեմ, որովհետև իմ 12 տարեկանն այնտեղ պետք է լրացած լիներ, որ նման փաստաթուղթ տային, և ես օգտվեի այն մեծ «բարիքներից», որ տրվում էին բռնագաղթվածներին, օրինակ՝ «ձրի» ավտոբուս նստեի... Ու պետք էլ չէր:

Այդ տարիներին հիշում եմ՝ պապս անընդհատ նամակներ էր գրում՝ Մոսկվա, Միկոյանին, այլոց՝ ասելով՝ եթե ինքը հանցագործ է, որ մասնակցել է հայկական բանակի՝ թուրքերի դեմ ճակատամարտին, ընտանի՞քն ինչ մեղք ունի, երեխանե՞րն ինչ մեղք ունեն: Բայց այդ նամակները դառնում էր Բակունցի գրած՝ նամակ ռուսաց թագավորինը: Պապիս կանչում էին Բառնաուլ, մի լավ ծեծում ճամփու էին դնում, որ էլ չգրի: 1955-56 թվականներն էին, որ մեր ընտանիքը վերադարձավ հայրենիք: Ինչն էր զավեշտալին. պապիս ազատման թուղթն ավելի շուտ եկավ, քան մեր՝ ընտանիքի անդամներինը: Եվ նա ստիպված էր մի քանի ամիս էլ մնալ աքսորավայրում, որ ընտանիքի հետ վերադառնա:

***

Իմ գիտակցական կյանքն սկսվեց Սիբիրից: Քանի որ զգացողություններս շատ սուր են, մերոնք միշտ զարմանում եմ իմ հիշողության վրա, ասում են 4-5 տարեկան երեխա ես եղել, այդքանը ոնց ես հիշում: Իսկ ես շատ մանրամասնորեն եմ հիշում՝ դեմքեր, դեպքեր: Դրանք մոռանալ էլ չի լինի, որովհետև իսկապես շատ դաժան էր կյանքը. սով, հայրենիքի կարոտ, վախեցած մարդիկ, խստություններ, ամեն ինչ չես կարող խոսել քո տան մեջ անգամ: Մեր

տանը սեղան էինք բացում, մեկը՝ թաքուն, մյուսը՝ ոչ թաքուն, մայիսի 9-ին բացում էինք, որովհետև հայրս պատերազմի մասնակից էր, հորս պատվին, մայիսի 28-ին՝ մեր առաջին հանրապետության օրը, դա էլ պապիս տոնն էր: Այդ ժամանակ թաքուն էինք նստում: Ինձ կանգնեցնում էին դռան մոտ, որ անծանոթ մարդ տեսնեմ, ասեմ՝ մարդ է գալիս, որ աղքատիկ այդ սեղանից օղի կամ այլ տոնական բաները հավաքեին:

Այդ գյուղը կառուցել էին հատկապես երկաթուղային կայարանի համար, որ անտառը կտրում էին, այդտեղից փայտը բարձեն, ուղարկեն «մեծ երկիր»: Ամառը շատ կարճ էր տևում, բայց շոգ էր, ու թիթեռներ շատ կային: Մենք ընկերներիս հետ թիթեռ էինք ուտում. սոված էինք: Թներն ուտել չէր լինում, մի տեսակ ալյուրոտ էին, պոկում էինք և ճխրտելով ուտում: Երբեմն սովն այնքան էր նեղում, ես ամենափոքրն էի, ինձ մի կտոր չոր հաց էին տալիս, ես այդ հացը ոչ թե ուտում էի, այլ փոքր կտորներով ծծում, որ երկար վայելեմ համը… Քնում էի ես սեղանի վրա, սեղանի տակ քնում էր Սվետիկը՝ մորաքույրս: Մինչև այսօր էլ հիշում եմ, որ նա օրորվում էր անընդհատ պառկած ու գոռում՝ սոված մելանք տո՛. . . մինչև բժժում էր ու քնում: Ահավոր էր, երբ պարետները գալիս էին ստուգման: Այդ ժամանակ ամբողջ տունը տակնուվրա էին անում, որից հետո երկար ժամանակ մորաքույրներս, մայրս տունը նորից դասավորում էին:

Պապս պահարանի դարակում՝ սրբիչների խորքում, պահում էր Անդրանիկի նկարը: Երբեմն թաքուն ցույց էր տալիս ինձ, ասում էր՝ ոչ մեկի չասես, հայրենասեր մարդ է եղել: Եվ երբ պարետը գալիս էր մեր տունը ստուգման, որպեսզի ես հայացքով չմատնեմ, վախեցած չնայեմ դեպի դարակը, մորաքույրներս ուսերիցս բռնում էին ու շրջում հայացքս պահարանից: Ու մի անգամ էլ ստուգման ժամանակ պարետը հայտնաբերեց նկարը: Հիշում եմ պապիս գունատված դեմքը: Այդ պահին կատարվեց հրաշքը. այդ պարետն Անդրանիկի նկարը շփոթեց Ստալինի նկարի հետ: Եվ շատ խիստ ասաց. ՛՛Портрет великого вождя товарища Сталина ты должен закрепить на стене, а не оставить здесь՛՛. Պապս անմիջապես ասաց՝ կփակցնեմ: Դրանից հետո Բառնաուլից ծանոթների միջոցով բերել տվեց Ստալինի նկարը՝ նույն չափի, մենք կախեցինք պատից՝ իբրև թե այդ նույն նկարն է, որովհետև հաջորդ անգամ եթե տեսներ չենք արել իր կարգադրությունը, լավ չէր լինի: Իսկ զորավար Անդրանիկի այդ նկարը մինչև հիմա մեր տանն է, ինձ մոտ:

***

Այդ գյուղում կար մի վարսավիր, տարիքով մարդ էր՝ մորուքով: Իրականում վարսավիր չէր, այլ քահանա: Գաղթել էր Բեյրութից թե ֆրանսիայից: Եվ երբ որ Բաթումի նավահանգստում իջել էր նավից, նկատել էր, որ երեք հոգի մոտենում էր իրեն: Խաչով խաչակնքել էր մոտեցողներին: Պարզվել էր, որ պետանվտանգության կոմիտեից են (КГБ), Բաթումից նրան ուղիղ քշել էին Սիբիր: Մեզ մոտ վարսավիրություն էր անում: Հիշում եմ, որ շատ ցավեցնում էր, երբ իմ մազերը խուզում էր: Եվ հետո ամեն անգամ, քարե հայելի էին ասում, որն, ինձ թվում է, քարից էր երևի՝ փայլեցրած, դժգույն հայելի էր, դրա հետևից գաղտնի, չորսկողմը նայելով, որ մարդ չտեսնի, դարձյալ հանում էր նկարներ, ինձ ցույց էր տալիս: Դրանց մեջ էին Անդրանիկը, Արաբոն, Սոսեն և էլի մեկը, որին հետագայում անձամբ ծանոթացա պապիկիս շնորհիվ՝ զորավար Մախլուտոն էր՝ շատ նշանավոր զորավար և Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպի հերոսը:

Սրանք ոչինչ չասող հուշեր կլինեն, եթե քահանայի մասին չպատմենք ամենակարևորը: Այդ քահանային հայերը գաղտնի, երբ հանգուցյալ էին ունենում, կանչում էին, որ նա թաղման

կարգ կատարեր, և քահանան, որպես կանոն, հանգուցյալի բռում մի փոքրիկ պտղունցաչափ հող էր դնում, թե՝ Հայաստանի հողն է: Երեխաներին էր կնքում գաղտնի: Բոլոր հայերն էլ, թեև հրավիրում էին նրան, բայց կասկած կար, որովհետև բոլորը զարմացած էին՝ այդ տերտերը փոքր մեռոնի ամանում այդ ինչքան մեռոն է հետը բերել, որ չի վերջանում: Կամ նրան Հայաստանի հող որտեղից, եթե ինքը Բաթումից էր աքսորված: Բայց քանի որ բոլորն իրենց հավատացյալ էին համարում և մանավանդ հայրենիքի կարոտ ունեին, փորձում էին իրենց հավատացնել, որ դա ճշմարիտ է:

Մեր տանը մի ծաղկաման կար, որը մորաքույրներիցս մեկն էր աքսորվելու ժամանակ բերել իր հետ, դրա մեջ աճում էր 22ածաղիկ (մենք այդպես էինք ասում): Շատ հետաքրքիր ծաղիկ էր՝ բաց վարդագույն ծաղիկներով, որ թթվաշ համ ունեին: Ես թաքուն պոկում ուտում էի: Տատս մի օր նկատեց, բարկացավ և ծաղիկը դրեց պահարանի գլխին, որ ձեռքս չհասնի: Տարիներ հետո, երբ Վանաձորում բռնադատվածների հուշարձանին էի գնացել՝ ստալինյան բռնադատության հոբելյանական տարելիցին (մենք ամեն տարի հունիսի 14-ին այցելում ենք), ես 22ածաղիկ տարա...

Հետո ես տատիկիս հարցրի՝ տերտերին այդ մասունքները որտեղից՝ մեռոնը, հողը, պարզվեց գաղտնիքը. մեռոնը խմել կոչվող բույսից էին ստանում, որից տատիկս երբեմն նաև գարեջուր էր պատրաստում: Տերտերն ասում էր՝ ինչ տարբերություն, իսկական մեռոնից մեջը մասնիկ կա, խառնվում է, բայց այդ մասնիկն էլ է մնում: Իսկ հողը իսկապես հայկական էր, որովհետև վերցվում էր այդ ծաղկամանից: Հետո հասկացա՝ տատիկս ինչու այդքան բարկացավ ինձ վրա. Հայաստանի հողով ծաղկաման էր, որից, ես ուշադրություն էլ չէի դարձնում, որ հողը պակասում էր, պտղունց-պտղունց բաժանվում էր հայերին:

Հետո այդ տերտերին մատնող եղավ: Հիշում եմ՝ ամբողջ գյուղը հավաքված՝ կարաբինավոր զինվորներն եկան տարան նրան: Կանայք արտասվում էին: Տերտերը հետ դարձավ, ասաց՝ ինչի կուլաք, Սիբիրից էլ այն կողմ հո չեն քշեր: Ու չվերադարձավ իհարկե: Նրա ճակատագիրն ինձ անհայտ է:

***

Բերիան իմ ընկերներից էր, մեր հարևանի տղան էր: Խաղում էինք, մեկ էլ հանկարծ Բերիայի մայրը ձայնը գցեց գլուխը, մեզ բոլորիս հո չի անիծում, հայհոյում է ու անիծում: Իմ երեխու անունն, ասում է, Բերիա չէ, ինչու եք նրան Բերիա ասում: Մենք բոլորս գիտեինք, որ Բերիա է, ինքն էլ, երբ տղային տուն էր կանչում, այդ անունով էր կանչում: Բայց սրա բարկանալու մեջ ես տեսնում էի, որ ինչ-որ բան այն չէ: Մի տեսակ անիծում էր մեզ, բայց սրտով չէր անիծում: Իրիկունն էլ մեծերն սկսեցին դաստիարակել, թե մեծ տղաներ եք, սրանից հետո էլ նրան Բերիա չասեք:

Անցան տարիներ, մի օր Երևանում մեկն ինձ գրկեց, բա՝ չես ճանաչում, Բերիան եմ: Փաթավեցինք: Թե՝ գնում ենք մեր տուն: Գնացինք, կին ուներ երեխաներ, ծանոթացրեց, մայրը եկավ գրկախառնվեցինք: Մայրը թե՝ լեզուս չորանա, բալա ջան, ես ստիպված էի ձեզ անիծում: Պարզվեց՝ այդ տղայի անունը իրականում եղել է Սիփան, և այդ անվան համար ընտանիքին աքսորել են Սիբիր: Սրանք վախեցած անունը փոխել էին Բերիա: Եվ այդ օրերին, երբ որ Բերիային կալանավորել էին, վախեցած հիմա էլ ասացին՝ Բերիա չէ, ինչ-որ մի ուրիշ անուն հնարեցին:

***

Մի հետաքրքիր երևույթ կար: Նախ, որպես կանոն, եթե հայերը ինչ-որ խնդիր էին ունենում, մեր տանն էին հավաքվում, սեղան էին գցում, ինքնաթոր օղի էին բերում (սամոգոն), տատիս պատրաստած գարեջուրը: Հայրս ասում էր՝ դե տղեք, սկսենք երգել: Տիրում էր մի խոր լռություն, բոլորը մտքում էին երգում… Ես երգի բառերը գիտեի, Անդրանիկին նվիրված երգերն էին: Բայց վախեցած, որ լսող կինի, մատնող կլինի, ինձ մինչև հիմա զարմացնում է՝ ինչպես էին բոլորը լուռ, իրար նայելով, իրար հետ սկսում, իրար հետ ավարտում այդ երգերը:

***

Ռուսները լավ խոսք ունեն՝ **жизнь была не малина**…Աղքատ, կային սոված ընտանիքներ շատ, հատկապես որ տղամարդ չկար, աշխատող ձեռք չկար: Բայց մյուսները նրանց օգնում էին, մի աման ճաշով, մի երկու բուռ ցորեն, գարիով, հացահատիկով:

Հայրս վարորդ էր, կտրածը (լես էինք ասում) ինքն էր տեղափոխում, բերում էր գյուղի ծայրում գտնվող փայտագործական արտադրամասը: Այդտեղ գերանները տախտակ էին սարքում, հսկա սղոց էր անընդհատ աշխատում: Այդ սղոցն աշխատացնում էր իմ փոքր քեռին: Մեծ քեռիս էլ շատ հմուտ խառատ էր, արհեստանոցում էր աշխատում, փայտի մշակման գործիքները կամ բեռնատարների ավտոմասերը որ փչանում էին, ինքն էր վերանորոգում, երկաթուղային կայարանից էին գալիս տարբեր դետալների համար: Եվ քանի որ ինքը խառատ էր, միշտ սև էին լինում ձեռքերը, «մրոտ» քեռի էի ասում նրան: Իսկ փոքր քեռուս, որ անընդհատ ծառի հետ գործ ուներ, անտառի խեժի (ռուս.՝ пихта) հոտ էի առնում նրանից, «պիխտա» քեռի էի ասում:

Տատիկս ճաշ էր եփում, լցնում էր փոքրիկ կաթսայի (котелок) մեջ, որ տանեմ խառատ քեռուս: Այդ կաթսան փայտե բռնակ չուներ, հիշում եմ միայն, որ ինձ համար ծանր էր դա տանելը, և մատներս ցավում էին:

Խառատ քեռիս Սիբիրում զենքեր էր պատրաստում, գաղտնի բաժանում հայ տղաներին, որովհետև հաճախ ընդհարումներ էին լինում: Կողքի գյուղերից էին գալիս՝ նրանք, ովքեր աքսորված չէին, այլ գործուղված: Հարբած՝ հայ աղջիկներին էին նեղացնում, տղաներն էլ միշտ կռվի մեջ էին ընկնում: Քեռիս նույնիսկ հրազեն էր սարքում, ատրճանակ, զինում էր տղաներին:

Հետո որ մի քիչ բարելավվեց վիճակը, ակումբ կառուցեցին՝ փայտաշեն, ակումբի ղեկավարումը հանձնարարեցին մեծ քեռուս: Հրաշալի բայան էր նվագում, հավաքվում էին կիրակի օրերին, պարահրապարակ կազմում. ռուսներ կային արդեն, հրեաներ, նրանք էլ էին աքսորյալ: Այդ գյուղում բոլորն էին աքսորյալ, հարևան գյուղերում էլ: Չաստուշկաներ էին երգում.

Мои руки в перчаточке, Добрый вечер девчаточки.

Я любила тракториста, а_он ушел в Барнаул.

Ֆիլմեր էր ցուցադրում նաև: Մինչ աքսորվելը պատանի հասակում մեծ քեռիս եղել է Երևանի պարային խմբում, Մոսկվա է գնացել փառատոնների, ճարպիկ է եղել այդ ոլորտում: Աքսորավայրից հետո Մասիսում կազմակերպեց ինքնագործ թատերական խումբ, հաճախ ինձ ասում են մեծ քեռուդ ես նման: Մյուս քեռիս էլ, որ լավ խառատ էր, հետագայում դարձավ

սովետական միության լավագույն լավարարներից (ռացիոնալիզատոր) մեկը: Այստեղ էլ էր խառատություն անում:

Մորաքույրներս՝ Կիման, Զարիկը, ճանապարհաշինական աշխատանքով էին զբաղված, բահով ավազ էին լցնում ճանապարհներին: Մայրս քանի որ երեխամայր էր, քույրս էլ ծնվեց, չէր աշխատում: Հետագայում, երբ քիչ-քիչ սկսեցին արդարացնել աքսորյալներին, լուր տարածվեց, որ Հայաստան փախածներին այլևս հետ չեն ուղարկի: Մեր ազատման թուղթը որ եկավ, արդեն գնացքով գալիս էինք, Կիմա մորաքրոջս հետներս փախցրինք: Ամբողջ ճանապարհին ստուգումներ էին անում, խեղճ մորաքրոջս մեկ զուգարանում էին պահում, մեկ տանիք էին հանում գնացքի, այդպես թաքնվելով՝ բերեցինք տեղ հասցրինք: Հետաքրքիր կին էր, իրեն թվում էր, թե մեծ բանաստեղծ է դառնալու: Ինքն էլ էր գրում:

Եվ այդ ծեր տիկնայք հետո, երբ ինչ-որ ընտանեկան հավաք, հարսանիք էր լինում, սկսում էին չաստուշակներ երգել, բոլորը զարմանում էին: Հրաշալի խոսում էին ռուսերեն:

Մեր տանը հարգի է եղել գիր-գրականությունը: Սիբիրում ընդհանրապես էլեկտրականություն չկար, վերջին տարիներին միայն՝ թույլ, մարմրող: Ակումբում կար, ժողովրդին չէր հասնում այդ լույսից: Վառարանի լույսի տակ մայրս բարձրաձայն գրքեր էր կարդում, ես, մայրս, քույրս, հայրս լսում էինք: Հայրս հաճախ ասում էր՝ տես, առանց ինձ չկարդաս, իրիկունը գամ, որ շարունակենք: Այդպես ես առաջինը ծանոթացա հայ գրականությանը, եվրոպական դասականներին, հետո մայրս սովորեցրեց տառերը մինչև դպրոց գնալս: Շատ եմ սիրում կարդալ, մինչև հիմա էլ կարդում եմ: Սիբիրում էլ արտասանում էի, իհարկե բոլշևիկյան ոտանավորներ էին դրանք, որովհետև վախ կար, որ պարետը կարող էր գալ ասել՝ թող երեխան ռուսերեն մի բան արտասանի:

***

Հետհայացք գցելով՝ Ստալինին պետք էր, որ նախ ձրի աշխատուժ ունենա: Դրա համար ճամբարներն ստեղծեց, գուլագները (ուղղիչ-աշխատանքային ճամբար): Գուլակներում չէին վճարում: Մերոնց՝ 49 թվականի աքսորվածներին ավելի շատ տարել են որպես աշխատուժ, և հազարավոր ընտանիքների մասսայաբար աքսորել էին՝ պարտադրված աշխատանքի: Շատ մարդկանց էին աքսորել, հատկապես հայրենադարձներին: Մեզ մոտ հայրենադարձներ կային, որ այդպես էլ տեղի հայերենը չսովորեցին, լավ ռուսերն գիտեին և արևմտահայերեն էին խոսում, հոգևորականներ կային: Պետական քաղաքականությունն էր, ստալինյան դաժան քաղաքականությունը, որն իր քաղաքացիներին դիտում էր որպես բանող անասունների:

Մենք իրավունք չունեինք գյուղի սահմաններից դուրս գալու, խիստ անհրաժեշտության դեպքում միայն պարետը հատուկ թուղթ էր տալիս, որ հիվանդ է, տեղի փոքր պոլիկլինիկան չի կարող բուժել, հսկողության տակ գնում էին Բառնաուլ: Ոչ ոք իրավունք չուներ լքելու գյուղը, և պարտադիր էր աշխատանքը: Նայում էին՝ մի քիչ ամրակազմ լիներ, ուղարկում էին փայտ կտրելու: Պլանը պետք է կատարվեր: Նորման էլ բարձր էր, մի երկուսը կատարում էին, կամ ձևը գտնում էին հսկիչների հետ՝ «լեզու գտնելով», որ իբր կատարել են: Պատահում էր, որ խեղճ տղա էր՝ տկար, հիվանդ, հայերը կազմակերպում էին, գնում էին ծառ կտրելու, իրենց կտրածները այդ մարդու անունով էին գրում, այլապես որպես վնասարարի՝պարետը կարող էր նրան դատի տալ՝ պլանը չկատարելու, հարազատ կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային երկրին վնաս տալու համար: Մեզ էլ վճարում էին, բայց այնքան, որ սովից

չմահանանք: Ու անընդհատ հսկողության տակ: Պարետը գալիս ստուգում էր, մատնություններ էր հավաքում: Ստալինի մահից հետո, երբ մարդիկ սկսեցին արդարացվել ու հետ գալ, ամենքի վրա մի սուտ մեղադրանքով մատնություն էին արել: Իմ պապի արդարացման թուղթը ճիշտ է եկավ, բայց 10 տարի անց նոր միայն դատարանը որոշեց, որ նա արդար է եղել և արդարացման դատավճիռ տվեց: Արդարացվելուց հետո բռնադատվածներին փաստաթուղթ տվեցին, որով նրանք որոշ արտոնություններ ունեին՝ անվճար ավտոբուս, մետրո նստելու, հող ունենալու, ասենք՝ մայրս կարող էր իրենց գյուղում հողատարածք ուզել և առաջնահերթությամբ պետք է բավարարվեր դիմումը:

Որ եկանք Կիրովական, գնացքը կանգնեց կայարանում, ես սարերին նայեցի ու վախից լաց եղա: Ես սար չէի տեսել, ինձ թվաց՝ հիմա կփլվեն իմ գլխին: Եկանք նախ Վանաձոր թաղամասում տուն վարձեցինք, գետնահարկ տուն էր, մեզ թույլ չէր տրվում լամպ ունենալ էլեկտրական, տանիքի ճեղքերից էր տանտիրոջ լույսը ընկնում, փնթփնթում էին, որ երեխաները, փոքրիկ այգի ունեին, հանկարծ ընկած, հոտած խնձորները չուտեն: Այդ տունը մինչև հիմա կա… Հետո տեղափոխվեցինք»:

Վավերագրումը, խմբագրում-սրբագրումը՝ Ադրինե Թորոսյանի